ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.01.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/119

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ
Մասնակից՝ «Ալուշ-Արաքս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Ալուշ-Արաքս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Ենգոյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Ալուշ-Արաքս» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 24.12.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>.**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել հանձնաժողովի 17.12.2021թ.-ի տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 2.2 կետով կայացրած որոշումները:

2. Պարտավորեցնել «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթ գնահատող հանձնաժողովին դադարեցնել պայմանագիր կնքելու մասին որոշումը:

3. Պարտավորեցնել «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «Ճանապարհ» ՍՊ, «Նաիրի-Նունե» ՍՊ, «Ծովագյուղի ՃՇՇ» ՍՊ, «Քյավառ սերվիս» ՍՊ, «Ճան Շին» ՍՊ ընկերությունների հայտերը մերժելու վերաբերյալ:

4. Պարտավորեցնել «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթ գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «Ալուշ-Արաքս» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

կամ

Պարտավորեցնել «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթ գնահատող հանձնաժողովին բանակցությունների արդյունքում նվազեցված գնային առաջարկները դիտարկել որպես 2022-2026թթ. նախատեսված՝ 5 տարիների համար առաջարկված աշխատանքների կատարման համար պայմանագրի ընդհանուր գին:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 24.12.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի կողմից 28.12.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/119 համարի ծածկագիրը:

10.01.2022թ.-ին, 18.01.2022թ.-ին և 24.01.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 18.01.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 24.01.2022թ.-ին:

2. **<u>«Ալուշ-Արաքս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.**

«Ալուշ-Արաքս» ՍՊԸ-ն 24.12.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կարիքների համար՝ ՀՀ միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի 1-ին մասի 1-ն բաժնի համաձայն՝ աշխատանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում:

Ընթացակարգի հրավերի 1.1 կետի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կարիքների համար՝ ՀՀ միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման աշխատանքների ձեռքբերումը (այսուհետ՝ նաև աշխատանք), որը խմբավորված է 3 չափաբաժնում՝

Չափաբաժինների համարները	*Չափաբաժնի անվանումը*
1	*Մ-4 Երևան - Սևան - Իջևան - Ադրբեջանի Հանրապետության սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ80+920 վրա գտնվող Դիլիջանի թունելի*
2	*Մ-3 Թուրքիայի Հանրապետության սահման - Մարգարա - Վանաձոր - Տաշիր -Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի վրա գտնվող կմ137+100 Պուշկինի թունելի*
3	*Մ-7 /Մ-3/ - Սպիտակ - Գյումրի - Թուրքիայի Հանրապետության սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի վրա գտնվող կմ4+500 Նալբանդի թունելի*

Ընթացակարգի հրավերի 5.3-րդ կետի համաձայն՝ եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով և համակարգում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:

Ընթացակարգի հրավերի Հավելված 2-ի՝ գնային առաջարկի համաձայն՝ .... առաջարկվում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով:

Ընթացակարգի հրավերի Հավելված 6-ի՝ Պայմանագրի նախագծի 1.2-րդ կետի համաձայն՝ աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին, ՀՀ տրանսպորտի և կապի

նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 7-ի N 710-Ն որոշման համապատասխան, կատարման ժամկետ է սահմանվում՝ մինչև 2026 թվականաի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Ընթացակարգի հրավերի Հավելված 6-ի՝ Պայմանագրի նախագծի 7.16-րդ կետի համաձայն՝ 2023 և հաջորդող տարիներին աշխատանքներու կկատարվեն ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

Վերը նշված ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի առաջին չափաբաժնի մասով, «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը՝ պայմանագրով նախատեսված ողջ ժամկետով նախատեսված աշխատանքների կատարման համար .

Չափա-բաժինների համարները	Աշխատանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /դրամներով և թվերով/	ԱԱՀ** /դրամներով և թվերով/	Ընդհանուր գինը /դրամներով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1	Մ-4 Երևան - Սևան - Իջևան - Ադրբեջանի Հանրապետության սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ80+920 վրա գտնվող Դիլիջանի թունելի	625 000 000	125 000 000	750 000 000

Մյուս մասնակիցների կողմից գնային առաջարկը ներկայացվել են միայն 2022թ. նախատեսված աշխատանքների կատարման համար:

Սույն ընթացակարգով 17.12.2021թ. տեղի է ունեցել գների շուրջ միաժամանակյա բանակցություններով մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջակները.

Մասնակցի գրաղեցրած տեղը և անվանումը	Մասնակցի անվանումը	Ընտրված մասնակից /ընտրված մասնակցի համար նշել «Х»/	Մասնակցի առաջարկած գինը առանց ԱԱՀ
1	Ճանապարհ ՍՊԸ	Х	49,999,999
2	Նաիրի-Նունե ՍՊԸ		50,000,000
3	Ծովագյուղի ՃՇՇ ՍՊԸ		99,500,000
4	Քյավառ սերվիս		106,000,000
5	Ճան Շին ՍՊԸ		106,500,000
6	ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ ՍՊԸ		500,000,000

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.12.2021թ. տեղի ունեցած նիստով «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ի կողմից լիազորված անձը գրավոր ներկայացրել է դիրքորոշում, որով նշվել է հետևյալը.

««ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով աշխատանքների կատարման համար սահմանվել է 5 տարի ժամկետ և «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ»

ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկը է ներկայցվել պայմանագրի իրականացման համար 750 000 000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Գինը առաջարկվել է պայմանագրի կատարման համար աշխատանքների իրականացման նպատակով հրավերով սահմանված ողջ ժամանակահատվածի համար՝ որևէ հղում ուղղորդում գնային առաջարկի ներկայցման մեկ տարվա հաշվարկով ներկայացնելու առկա չի եղել հրավերով:

Վերոգրյալով պայմանավորված՝ գների նվազեցման ժուրջ բանակցությունների ընթացքում և առաջարկ ներկայացվել է մեր կողմից հրավերով սահմանված ողջ ժամանակահատվածի ընթացքում աշխատանքների իրականացնելու համար:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.12.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 2.2 կետով գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ միաժամանակյա բանակցությունների ընթացքում «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ի կողմից լիազորված անձը գրավոր ներկայացրել է դիրքորոշում, որին ի պատասխան գնահատող հանձնաժողովի կողմից տրվել է պարզաբանում, որ գնային առաջարկը անհրաժեշտ էր ներկայացնել մեկ տարվա սպասարկման արժեքի չափով՝ առաջնորդվելով հրավերով ներկայացված պայմանգրի նախագծի 4.1 կետով սահմանված է, որ «Պայմանգրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը 2022թ. համար կազմում է _____/___տառերով___/ ՀՀ դրամ , ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:», ինչից պարզ է դառնում, որ գնային առաջարկն անրաժեշտ է ներկայացնել մեկ տարվա համար: Ինչպես նաև բանակցություններից առաջ քարտուղարի կողմից ներկայցավել է բանակցման կարգ, որով սահմանվել է, որ բանակցում են մեկ տարվա արժեքի շուրջ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն Մրցույթին ներկայացնել մեկից ավելի հայտ:

Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 51-րդ հոդվածի համաձայն՝ պայմանագրի գինը կայուն է, եթե պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում, ապրանքները մատակարարվում և ծառայությունները մատուցվում են մինչև երեք տարվա ընթացքում: Եթե հրավերում և պայմանագրում նշված չէ, որ պայմանագրի գինը գործոնային է, ապա պայմանագրի գինը համարվում է կայուն՝ անկախ պայմանագրի կատարման ժամկետից:

Կարգի 53-րդ կետի համաձայն՝ պայմանագրի գինը կարող է լինել գործոնային՝ այդ պայմանը հրավերով ու պայմանագրով նախատեսված լինելու դեպքում, եթե՝

1) պայմանագրով նախատեսված ապրանքները մատակարարվում, ծառայությունները մատուցվում և աշխատանքները կատարվում են պայմանագրի կնքման օրվանից երեք տարին գերազանցող ժամանակահատվածում՝ միայն երեք տարին գերազանցող ժամանակահատվածի համար պայմանագրով նախատեսված գների փոփոխության հնարավորությամբ.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած այլ դեպքերում:

Կարգի 54-րդ կետի համաձայն՝ եթե պայմանագրի գինը գործոնային է, հրավերով նախատեսվում են՝

1) բոլոր այն պայմանները (այսուհետ՝ արտաքին գործոններ), որոնց փոփոխությամբ պայմանագրի գինը կարող է փոփոխվել.

2) արտաքին գործոնների փոփոխությամբ պայմանագրի գնի փոփոխման կարգը:

Ինչպես արդեն նշել ենք, Ընթացակարգի 1-ին մասի 1-ն բաժնի համաձայն՝ աշխատանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում:

Ընթացակարգի հրավերի 1.1 կետով ամրագրվել է, որ գնման առարկա է հանդիսանում «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կարիքների համար՝ ՀՀ միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման աշխատանքների ձեռքբերումը:

Ընթացակարգի հրավերի 5.3-րդ կետը ամրագրում է, որ եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով և համակարգում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:

Ընթացակարգի հրավերի Հավելված 2-ի՝ գնային առաջարկի համաձայն՝ առաջարկվում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով:

Ընթացակարգի հրավերի Հավելված 6-ի՝ պայմանագրի նախագծի 1.2-րդ կետի համաձայն՝ աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 7-ի N 710-Ն որոշման համապատասխան, կատարման ժամկետ է սահմանվում՝ մինչև 2026 թվականաի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Միևնույն ժամանակ, Ընթացակարգի հրավերի Հավելված 6-ի՝ Պայմանագրի նախագծի 7.16-րդ կետի համաձայն՝ 2023 և հաջորդող տարիներին աշխատանքներու կկատարվեն ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

Տվյալ ընթացակարգով բոլոր մասնակիցները, բացի «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ից, գնային առաջարկը ներկայացրել են մեկ տարվա համար նախատեսված աշխատանքների համար:

Սույն ընթացակարգով 17.12.2021թ. տեղի է ունեցել գների շուրջ միաժամանակյա բանակցություններով մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջակները.

Մասնակցի գրաղեցրած տեղը և անվանումը	*Մասնակցի անվանումը*	*Ընտրված մասնակից /ընտրված մասնակցի համար նշել «X»/*	*Մասնակցի առաջարկած գինը առանց ԱԱՀ*
1	*Ճանապարհ ՍՊԸ*	*X*	*49,999,999*
2	*Նաիրի-Նունե ՍՊԸ*		*50,000,000*
3	*Ծովագյուղի ՃՇՇ ՍՊԸ*		*99,500,000*
4	*Քյավառ սերվիս*		*106,000,000*
5	*Ճան Շին ՍՊԸ*		*106,500,000*
6	*ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ ՍՊԸ*		*500,000,000*

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.12.2021թ. տեղի ունեցած նիստով «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ի կողմից լիազորված անձը գրավոր ներկայացրել է դիրքորոշում, որով նշվել է հետևյալը. ««ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով աշխատանքների կատարման համար սահմանվել է 5 տարի ժամկետ և «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկը է ներկայցվել պայմանագրի իրականացման համար 750 000 000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Գինը առաջարկվել է պայմանագրի կատարման համար աշխատանքների իրականացման նպատակով հրավերով սահմանված ողջ ժամանակահատվածի համար՝ որևէ հղում ուղղորդում գնային առաջարկի ներկայցման մեկ տարվա հաշվարկով ներկայացնելու առկա չի եղել հրավերով: Վերոգրյալով պայմանավորված՝ գների նվազեցման ժուրջ

բանակցությունների ընթացքում և առաջարկ ներկայացվել է մեր կողմից հրավերով սահմանված ողջ ժամանակահատվածի ընթացքում աշխատանքների իրականացնելու համար»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.12.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 2.2 կետով գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ միաժամանակյա բանակցությունների ընթացքում «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ի կողմից լիազորված անձը գրավոր ներկայացրել է դիրքորոշում, որին ի պատասխան գնահատող հանձնաժողովի կողմից տրվել է պարզաբանում, որ գնային առաջարկը անհրաժեշտ էր ներկայացնել մեկ տարվա սպասարկման արժեքի չափով՝ առաջնորդվելով հրավերով ներկայացված պայմանգրի նախագծի 4.1 կետով սահմանված է, որ «Պայմանգրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը 2022թ. համար կազմում է _____/___տառերով___/ ՀՀ դրամ , ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:», ինչից պարզ է դառնում, որ գնային առաջարկն անրաժեշտ է ներկայացնել մեկ տարվա համար: Ինչպես նաև բանակցություններից առաջ քարտուղարի կողմից ներկայցավել է բանակցման կարգ, որով սահմանվել է, որ բանակցում են մեկ տարվա արժեքի շուրջ:

Այսպիսով, բողոքներ քննող անձին խնդրում ենք հաշվի առնել հետևյալ հանգամանքները.

- *Հրավերով սահմանվել է, որ աշխատանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում: Միևնույն ժամանակ, Հավելված 6-ի՝ պայմանագրի նախագծի, 1.2-րդ կետը ամրագրել է, որ պայմանագրով նախատեսված աշխատանքը պետք է կատարվի հինգ տարիների համար՝ մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ: Ըստ նույն Հրավերի՝ 2022թ. համար պետք է կնքվի պայմանագիր, իսկ հաջորդ տարիների համար՝ համաձայնագրեր:*

Այսպիսով կարելի է արձանագրել, որ հրավերով նախատեսվել են աշխատնքների կատարումը 2022-2026թթ. համար, քանի որ վերոհիշյալը ուղղակիորեն ամրագրված է Ընթացակարգի հրավերով:

- *Հավելված 2-ով՝ գնային առաջարկով, հստակ նախատեսվել է, որ տվյալ ընթացակարգով նախատեսված աշխատանքի, այսինքն աշխատանքի համար, որը պետք է կատարվի 2022-2026թ., ներկայացվում է ընդհանուր գին:*

- *Հրավերում բացակայում է որևէ նշում առ այն, որ պայմանագրի գինը գործոնային է, ինչպես դա պահանջում է գործոնային գնի դեպքում Կարգի 53-րդ և 54-րդ կետերը:*
- *Հրավերում բացակայում է նշում առ այն, որ հայտով գնային առաջարկը պետք է ներկայացվի ոչ թե նշված հինգ տարիների, այլ մեկ տարվա համար, այսինքն միավորի գնով:*

Տվյալ պարագայում գտնում ենք, որ անհիմն է ընթացակարգի գնահատող հանձնաժողովի պնդումը առ այն, որ գնային առաջարկը անհրաժեշտ էր ներկայացնել մեկ տարվա սպասարկման արժեքի չափով, քանի որ դրա մասին Ընթացակարգի հրավերով որևէ նշում բացակայում է, իսկ վկայակոչված փաստերը վկայում են հակառակը, որ գնային առաջարկը պետք է ներկայացվեր Ընթացակարգի հրավերով նախատեսված 5 տարվա աշխատանքի համար՝ ընդհանուր գնով:

Առավել ևս անհիմն է գնահատող հանձնաժողովի պնդումը առ այն, որ բանակցությունները պետք է վարվեին մեկ տարվա առաջարկված գնի շուրջ:

Ինչ վերաբերվում է գնահատող հանձնաժողովի այն պնդմանը, որ մեկ տարվա գին առաջարկելը բխում է պայմանգրի նախագծի 4.1 կետի բովանդակությունից, որի համաձայն՝ ով սահմանված է, որ «Պայմանգրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը 2022թ. համար կազմում է _____/___տառերով___/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, ապա այս կապակցությամբ հայտնում ենք, որ պայմանագրի 1.2-րդ կետը հստակ նախատեսում է, որ պայմանագրով նախատեսված աշխատանքը կատարվում է մինչև 2026 թվականաի դեկտեմբերի 31-ը ներառյալ, և նույն պայմանագրով նախատեսվում է, որ 2022թ. համար կնքվում է պայմանագիր, իսկ մյուս տարիների համար՝ համաձայնագրեր:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովը բացի Բողոքաբերից, մյուս մասնակիցների հայտերը պետք է գնահատեր անբավարար և մերժեր՝ Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի ուժով, քանի որ հենց գնահատող հանձնաժողովն է փաստում, որ մասնակիցների կողմից առաջարկվել է միավորի, այլ ոչ թե ընդհանուրի գին, կամ պետք է մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները դիտարկվի որպես 5 տարիների համար առաջարկված ընդհանուր գին և պահանջի, որպեսզի նախատեսված 5 տարվա աշխատանքները կատարվեն վերոհիշյալ գնով:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի, 7-րդ հոդվածի 1-ին մասի, 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները:»:

Վերոգրյալով պայմանավորված՝ «Ալուշ-Արաքս» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել հանձնաժողովի 17.12.2021թ.-ի տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 2.2 կետով կայացրած որոշումները:

2. Պարտավորեցնել «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթ գնահատող հանձնաժողովին դադարեցնել պայմանագիր կնքելու մասին որոշումը:

3. Պարտավորեցնել «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «Ճանապարհ» ՍՊ, «Նաիրի-Նունե» ՍՊ, «Ծովագյուղի ՃՇՇ» ՍՊ, «Քյավառ սերվիս» ՍՊ, «Ճան Շին» ՍՊ ընկերությունների հայտերը մերժելու վերաբերյալ:

4. Պարտավորեցնել «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթ գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «Ալուշ-Արաքս» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

կամ

Պարտավորեցնել «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթ գնահատող հանձնաժողովին բանակցությունների արդյունքում նվազեցված գնային առաջարկները դիտարկել որպես 2022-2026թթ. նախատեսված՝ 5 տարիների համար առաջարկված աշխատանքների կատարման համար պայմանագրի ընդհանուր գին:

Ընկերությունը, 11.01.2022թ.-ին ներկայացրած բողոքի լրացմամբ, հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է քննվում ընթացքում «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/119 բողոքը, որով վիճարկվել է «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կարիքների համար՝ ՀՀ միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի որոշումների իրավաչափության հարցը:

Սույն բողոքի քննությանը նվիրված նիստի ընթացքում բարձրացված հարցերի հիման վրա և դրա արդյունքում ներկայացվում են թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/119 բողոքի պահանջի սույն հստակեցումը.

Թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/119 բողոքի քննությանը նվիրված նիստի ժամանակ քննարկման առարկա դարձավ, թե արդյոք մասնակիցների կողմից հայտով ներկայացվել է

մեկ տարվա (2022թ. համար) համար գնային առաջարկ, թե աշխատանքի ողջ ժամանակաշրջանի համար:

Այս կապակցությամբ բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ «ԱԼՈԻՇ- ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ի մոտ այլ մասնակիցների ներկայացված գնային առաջարկները ուսումնասիրելիս հարց է առաջացել, թե մասնակիցները աշխատանքի որ ժամանակաշրջանի համար են ներկայացրել գնային առաջրկը՝ մեկ, թե՝ հինք տարվա համար:

Այդ իսկ պատճառով «ԱԼՈԻՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ի կողմից լիազորված անձը գրավոր ներկայացրել է դիրքորոշում գնահատող հանձնաժողովին, որով նշվել է հետևյալը. «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով աշխատանքների կատարման համար սահմանվել է 5 տարի ժամկետ ն «ԱԼՈԻՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկը ներկայցվել է պայմանագրի իրականացման համար 750 000 000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Գինը առաջարկվել է պայմանագրի կատարման համար աշխատանքների իրականացման նպատակով հրավերով սահմանված ողջ ժամանակահատվածի համար՝ որևէ հղում ուղղորդում գնային առաջարկի նհրկայցման մեկ տարվա հաշվարկով ներկայացնելու առկա չի եղել հրավերով: Վերոգրյալով պայմանավորված՝ գների նվազեցման շուրջ բանակցությունների ընթացքում է առաջարկ ներկայացվել է մեր կողմից հրավերով սահմանված ողջ ժամանակահատվածի ընթացքում աշխատանքների իրականացնելու համար:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.12.2021թ. տեղի ունեցած նիստի ժամանակ քննարկման սաարկա է դարձել այն հարցը, որ մասնակիցները գնային առաջարկը պետք է ներկայացնեին միայն մեկ՝ 2022թ. համար, ինչին հակառակ որևէ այլ մասնակից չի առարկել, որ ինքը գնային առաջարկը ներկայացրել է հինգ աարվա համար:

Ի հավաստումն վերոհիշյալի՝ բողոքներ քննող անձին խնդրում եմ հաշվի առնել, որ հենց Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.12.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 2.2 կետով գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ միաժամանակյա բանակցությունների ընթացքում «ԱԼՈԻՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ի կողմից լիազորված անձը գրավոր ներկայացրել է դիրքորոշում, որին ի պատասխան գնահատող հանձնաժողովի կողմից տրվել է պարզաբանում, որ գնային առաջարկը անհրաժեշտ էր ներկայացնել մեկ տարվա սպասարկման արժեքի չափով՝ առաջնորդվելով հրավերով ներկայացված պայմանագրի նախագծի 4.1 կետով սահմանված է, որ «Պայմանագրով

Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը 2022թ համար կազմում է _____ (_____տառերով_____) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:», ինչից պարզ է դառնում որ գնային առաջարկն անհրաժեշտ էր ներկայացնել մեկ տարվա համար:

Ինչպես նաև բանակցություններից առաջ քարտուղարի կողմից ներկայացվել է բանակցման կարգ, որով սահմանվել է, որ բանակցում են մեկ տարվա արժեքի շուրջ:

Միևնույն ժամանակ հաշվի առնելով, որ «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ն մասնակցել է Ընթացակարգի միայն 1-ին չափաբաժնին, դրանով պայմանավորված նույնպես ներկայացվում է պահանջի հստակեցում:»:

Վերոգրյալների հիման վրա, «Ալուշ-Արաքս» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացրել է բողոքի փոփոխված և վերջնական պահանջը և խնդրել է՝,

1. Պարտավորեցնել «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթ գնահատող հանձնաժողովին դադարեցնել հանձնաժողովի 17.12.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 2.2 կետով կայացրած որոշումները՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով:

2. Պարտավորեցնել «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ յաց մրցույթ գնահատող հանձնաժողովին ղադարիցնիլ պայմանագիր կնքելու մասին որոշումը Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով:

3. Պարտավորեցնել «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթ գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «Ճանապարհ» ՍՊ, «Նաիրի-Նունե» ՍՊ, «Ծովագյուղի ՃՇՇ» ՍՊ, «Քյավառ սերվիս» ՍՊ, «Ճան Շին» ՍՊ ընկերությունների հայտերը մերժելու վերաբերյալ:

4. Պարտավորեցնել «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթ գնահատող հանձնաժողովին ընղունել որոշում՝ Ընթացակարգի 1-ին չավլաբաժնի մասով «Ալուշ-Արաքս» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

կամ

Պարտավորեցնել «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ քաց մրցույթ գնահատող հանձնաժողովին հայտերով ներկայացրած և բանակցությունների արդյունքում նվազեցված գնային առաջարկները դիտարկել որպես 2022-2026թթ. նախատեսված՝ 5 տարիների համար առաջարկված աշխատանքների կատարման համար պայմանագրի ընդհանուր գին:

3. <u>«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 28.12.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/21572-2021 գրությամբ դիմել է «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Ալուշ-Արաքս» ՍՊԸ-ի կողմից 24.12.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 29.12.2021թ.-ի թիվ 01/03/4262-2021 գրությամբ ներկայացրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված փաստաթղթերը՝ չներկայացնելով գրավոր դիրքորոշում:

Պատվիրատուն 14.01.2022թ.-ի թիվ 01/03/107-2022 գրությամբ ներկայացնելով գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

««Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամը քննարկելով «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ բողոքաբեր) կողմից ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/119 բողոքի պահանջի հստակեցումը, հայտնում ենք հետևյալը՝

Ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս ծածկագրով գնման ընթացակարգի հրավերին կից ներկայացված պայմանագրի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 4.1 կետով սահմանված է, որ Պայմանագրի գինը սահմանվում է 2022 թվականի համար կատարվելիք աշխատանքի արժեքի չափով: Նախագծի 7.16 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության դեպքում և դրա հիման վրա կողմերի միջև կնքվելիք համաձայնագիր կնքելու միջոցով:

2023 թվականի և հաջորդող տարիներին աշխատանքները կկատարվեն ֆինանսական միջոցներ նախատեսելու դեպքում՝ համաձայնագիր կնքելու միջոցով:

Անդրադառնալով 10.01.2022 թվականին կայացած նիստի ժամանակ բողոքաբերի կողմից կատարված պնդմանը, որ վերոնշյալ կետը ընդամենը նախագծի կետ է՝ հայտնում ենք, որ այդ նախագիծը հանդիսանում է հրավերի անբաժանելի մաս և դրանով

սահմանվում են կապարողի պայմանագրային պարտավորությունները: Բողոքաբերն ուներ բավական ժամանակ ծանոթանալու հրավերին և դրան կից ներկայացված փաստաթղթերի պահանջներին, ինչպես նաև ստանալ անհրաժեշտ պարզաբանումներ:

Ավելին՝ բանակցությունների ընթացքում Պայմանագրային նշված կարգավորման մասին բողոքաբերի լիազորված անձին տրվել է պարզաբանում: Մասնավորապես՝ վերջինիս տեղեկացվել է, որ գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել մեկ տարվա՝ 2022 թվականի իրականացվելիք սպասարկման աշխատանքների համար: Բանակցային կարգը ներկայացրել է նաև գնահատող հանձնաժողովի քարտուղարը, շեշտելով, որ մասնակիցները բանակցում են մեկ տարվա սպասարկման արժեքի շուրջ: Նշված պարզաբանումների արդյունքում՝ բողոքաբերի լիազորված անձին հնարավորություն է տրվել ներկայացնել մեկ տարվա սպասարկման արժեքի գնային առաջարկ, մինչդեռ ընկերության լիազորված անձն անտեսել է գնահատող հանձնաժողովի առաջարկն ու պարզաբանումները, ներկայացրել դիրքորոշում և գնային առաջարկը ներկայացրել 5 տարի սպասարկման համար:

Ընդ որում՝ եթե նույնիսկ բողոքաբերի կողմից 5 տարվա համար ներկայացված գնային առաջարկը, որը կազմում է 600,000,000 ՀՀ դրամ, բաժանենք 5 տարիների, վերջինիս գնային առաջարկը ավելի բարձր է, քան նվազագույն արժեք ներկայացրած մասնակցի գնային առաջարկը, որը կազմում է 59,999,999 ՀՀ դրամ:

Այսպիսով բողոքաբերի պահանջները դիտարկում ենք կանխամտածված քայլ, մրցակցային դաշտը սահմանափակելու համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ բողոքն ամբողջությամբ անհիմն է և ենթակա է մերժման:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2021/119 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կողմից ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման աշխատանքների ձեռքբերման նպատակով 24.11.2021թ.-ին հայտարարվել է «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի համաձայն՝ գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասի հիման վրա:

iii. Ընթացակարգի հրավերի հավելված 2-ով՝ գնային առաջարկի համաձայն՝

Ուսումնասիրելով «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը,_____-ն առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Չափա-բաժինների համարները	**Աշխատանքի անվանումը**	**Արժեք** (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) **/տառերով և թվերով/**	**ԱԱՀ** /տառերով և թվերով/**	**Ընդհանուր գինը /տառերով և թվերով/**
1	***2***	***3***	***4***	***5=3+4***
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>			
2	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>>			
3	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>>			

iv. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար թունելների պահպանման աշխատանքներ կատարման պետական գնման պայմանագրի (այսուհետ նաև՝ Պայմանագիր) 1.2-րդ կետի համաձայն՝ աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 7-ի N 710-Ն որոշման համապատասխան, կատարման ժամկետ է սահմանվում՝ մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

v. Նույն պայմանագրի 4.1-րդ կետի համաձայն՝ պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը 2022թ.-ի համար կազմում է _____ (____տառերով_____) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

vi. Պայմանագրի 7.16-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:

2023 և հաջորդող տարիներին աշխատանքները կկատարվեն ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

vii. Պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցի (այսուհետ նաև՝ Հավելված 1) համաձայն՝

Աշխատանքի								
հրավերով նախատեսված	գնումների պլանով	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ	ընդհանուր գինը/ՀՀ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	Ժամկետը

չափաբաժնի համարը	նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)			դրամ	դրամ			
1.	45231176/541	Ստորև	դրամ			1	Համաձայն բնութագրի	31.12.2026թ.

viii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 14.12.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 1-ին չափաբաժնի մասով նախահաշվային գինը կազմում է 129 300 440 ՀՀ դրամ:

ix. Նույն արձանագրության 7-րդ բաժնի համաձայն՝ Մասնակիցները 1-ին չափաբաժնի մասով ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Մասնակցի անվանումը	Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր գին
1Քյավառ Սերվիս	120,000,000	24,000,000	144,000,000
2 Ճան Շին ՍՊԸ	150,000,000	30,000,000	180,000,000
3 Ծովագյուղի ՃՇՇ ՍՊԸ	167,000,000	33,400,000	200,400,000
4 Ճանապարհ ՍՊԸ	180,000,000	36,000,000	216,000,000
5Նաիրի-Նունե ՍՊԸ	350,000,000	0	350,000,000
6 ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ ՍՊԸ	625,000,000	125,000,000	750,000,000

x. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, և որ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, որոշել է նիստը կասեցնել, էլեկտրոնային ձևով ծանուցել բավարար գնահատված մասնակիցներին 17.12.2021թ.-ին ժամը՝ 15:00-ին հրավիրել գների նվազեցման շուրջ բանակցությունների:

xi. Հանձնաժողովի 17.12.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության 2.1-րդ կետի համաձայն՝ 17.12.2021թ.-ին հրավիրված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին ներկայացել են հրավիրված բոլոր մասնակիցները բացի «Մ. Բուատ» ՍՊԸ-ի և «Կամրջային երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան» ՓԲԸ-ի: Մասնակիցները առաջարկել են պամանագիրը կատարել հետևյալ գներով.

Մասնակցի անվանումը	Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր գին
Ճանապարհ ՍՊԸ	49,999,999	10,000,000	59,999,999
Նաիրի-Նունե ՍՊԸ	50,000,000	0	50,000,000
Ծովագյուղի ՃՇՇ ՍՊԸ	99,500,000	19,900,000	119,400,000
Քյավառ սերվիս	106,000,000	21,200,000	127,200,000
Ճան Շին ՍՊԸ	106,500,000	21,300,000	127,800,000
ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ ՍՊԸ	500,000,000	100,000,000	600,000,000

xii. Նույն արձանագրության 2.2-րդ կետի համաձայն՝ միաժամանակյա բանակությունների ընթացքում «Ալուշ-Արաքս» ՍՊԸ-ի կողմից լիազորված անձը գրավոր

ներկայացրել է դիրքորոշում, որին ի պատասխան գնահատող հանձնաժողովի կողմից տրվել է պարզաբանում, որ գնային առաջարկը անրաժեշտ էր ներկայացնել մեկ տարվա սպասարկման արժեքի չափով՝ առաջնորդվելով հրավերով ներկայացված պայմանագրի նախագծի 4.1. կետով սահմանված է, որ «Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը 2022թ համար կազմում է _____ (_____տառերով_____) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:», ինչից պարզ է դառնում որ գնային առաջարկն անհրաժեշտ էր ներկայացնել մեկ տարվա համար:

Ինչպես նաև բանակցություններից առաջ քարտուղարի կողմից ներկայացվել է բանակցման կարգ, որով սահմանվել է, որ բանակցում են մեկ տարվա արժեքի շուրջ:

xiii. Նույն արձանագրության 4-րդ բաժնի համաձայն՝ Հանձնաժողովը, 1-ին չափաբաժնի մասով, որոշել է «Ճանապարհ» ՍՊԸ-ին ճանաչել «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից: Ընտրված մասնակիցներին առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի և որակավորման ապահովում հրավերով սահմանված կարգին համապատասխան: Հաստատել ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

xiv. www.gnumner.am կայքում 17.12.2021թ.-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ 10 օրացուցային օր:

xv. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի 19.01.2022թ.-ի թիվ 01//146-2022 գրության համաձայն՝ Հանձնաժողովի 17.12.2021թ.-ին կայացված բանակցությունների նիստի տեսաձայնագրությունը կամ ձայնագրությունը չի պահպանվել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ «Ալուշ-Արաքս» ՍՊԸ-ի կողմից 24.12.2021թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման մասնակիորեն, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան

հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ ենթակետի (օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները) համաձայն՝ գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով:

Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝ երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մասն է:

Կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված:

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը:

Վկայակոչված նորմերի վերլուծությունից հետևում է, որ հայտերի բացման նիստում հրապարակվում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը: Եթե հայտերի գնահատման ընթացքում արձանագրվում է առաջարկված նվազագույն գների հավասարության, կամ եթե մասնակցել է մեկ մասնակից, կամ եթե հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման հայտով սահմանված գինը, կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ պետք է վարվեն միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները:

Մասնակիցների՝ բացման նիստին ներկա չգտնվելու դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների

վարման օրվա, ժամի և վայրի մասին, որը վարվում է ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը:

Կարգի 32-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով:

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կողմից ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման աշխատանքների ձեռքբերման նպատակով 24.11.2021թ.-ին հայտարարված «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) համաձայն՝ գնման գործընթացն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասի հիման վրա:

Հրավերի 5.1-րդ և 5.2-րդ կետերի համաձայն՝ առաջարկվող գինը աշխատանքի արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով համակարգի միջոցով: Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման: (…)

Նույն հրավերի 5.3-րդ կետի համաձայն՝ եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով և համակարգում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում մասնակցից չի կարող պահանջվել, որ նա ներկայացնի գնային առաջարկի հիմնավորումներ կամ որևէ այլ տիպի տեղեկություններ կամ փաստաթղթեր, ինչպես նաև մասնակցի շահույթի չափը չի կարող հրավերով սահմանափակվել:

Հրավերի հավելված 2-ով՝ «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի գնային առաջարկով (այսուհետ նաև՝ Հավելված 2) սահմանվել է, որ մասնակիցը պետք է պայմանագիրը կատարելու համար ներկայացնի ընդհանուր գինը՝ տառերով և թվերով:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կողմից ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման աշխատանքների ձեռքբերման նպատակով 24.11.2021թ.-ին հայտարարված «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի հիման վրա՝ ֆինանսական միջոցներ նախատեսված չլինելու հիմքով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.12.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ 1-ին չափաբաժնի նախահաշվային գինը կազմում է 129 300 440 ՀՀ դրամ:

Մասնակիցները 1-ին չափաբաժնի մասով ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Մասնակցի անվանումը	**Գինն առանց ԱԱՀ**	**ԱԱՀ**	**Ընդհանուր գին**
1 Քյավառ Սերվիս	120,000,000	24,000,000	144,000,000
2 Ճան Շին ՍՊԸ	150,000,000	30,000,000	180,000,000
3 Ծովագյուղի ՃՇՇ ՍՊԸ	167,000,000	33,400,000	200,400,000
4 Ճանապարհ ՍՊԸ	180,000,000	36,000,000	216,000,000
5 Նաիրի-Նունե ՍՊԸ	350,000,000	0	350,000,000
6 ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ ՍՊԸ	625,000,000	125,000,000	750,000,000

17.12.2021թ.-ին հրավիրված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին Մասնակիցները առաջարկել են պամանագիրը կատարել հետևյալ գներով.

Մասնակցի անվանումը	**Գինն առանց ԱԱՀ**	**ԱԱՀ**	**Ընդհանուր գին**
Ճանապարհ ՍՊԸ	49,999,999	10,000,000	59,999,999
Նաիրի-Նունե ՍՊԸ	50,000,000	0	50,000,000
Ծովագյուղի ՃՇՇ ՍՊԸ	99,500,000	19,900,000	119,400,000
Քյավառ սերվիս	106,000,000	21,200,000	127,200,000
Ճան Շին ՍՊԸ	106,500,000	21,300,000	127,800,000
ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ ՍՊԸ	500,000,000	100,000,000	600,000,000

Միաժամանակյա բանակությունների ընթացքում «Ալուշ-Արաքս» ՍՊԸ-ի կողմից լիազորված անձը գրավոր ներկայացրել է դիրքորոշում, որին ի պատասխան գնահատող հանձնաժողովի կողմից տրվել է պարզաբանում, որ գնային առաջարկը անրաժեշտ էր ներկայացնել մեկ տարվա սպասարկման արժեքի չափով՝ առաջնորդվելով հրավերով

ներկայացված պայմանագրի նախագծի 4.1. կետով սահմանված է, որ «Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը 2022թ համար կազմում է _____ (_____տառերով_____) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:», ինչից պարզ է դառնում որ գնային առաջարկն անհրաժեշտ էր ներկայացնել մեկ տարվա համար: Ինչպես նաև բանակցություններից առաջ քարտուղարի կողմից ներկայացվել է բանակցման կարգ, որով սահմանվել է, որ բանակցում են մեկ տարվա արժեքի շուրջ:

Արդյունքում՝ Հանձնաժողովը որոշել է «Ճանապարհ» ՍՊԸ-ին, 1-ին չափաբաժնի մասով, ճանաչել «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից: Ընտրված մասնակիցներին առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի և որակավորման ապահովում հրավերով սահմանված կարգին համապատասխան: Հաստատել ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Հրավերի 5.3-րդ կետով սահմանվել է, որ գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով, իսկ արդեն Հրավերի հավելված 2-ով՝ «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի գնային առաջարկով, սահմանվել է, որ մասնակիցը պետք է պայմանագիրը կատարելու համար ներկայացնի ընդհանուր գինը՝ տառերով և թվերով:

Հանձնաժողովի 17.12.2021թ.-ին կայացված բանակցությունների նիստի տեսաձայնագրությունը կամ ձայնագրությունը չի պահպանվել:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանց համակարգված և համադրված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ, տվյալ դեպքում, «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը, չպահպանելով բանակցությունների նիստի տեսաձայնագրությունը կամ ձայնագրությունը, խախտել է Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետը: Նման պայմաններում, առանց բանակցությունների նիստի տեսաձայնագրության կամ ձայնագրության, Բողոքներ քննող անձը փաստում է, որ անհնարին է հաստատված համարել կամ հերքել բողոք ներկայացրած անձի և պատվիրատուի կողմից սույն բողոքարկման ընթացակարգում ներկայացված փաստական հանգամանքները:

Հատկապես, երբ այդ փաստական տվյալները վերաբերում են մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներին, ըստ այդմ՝ վերջիններիս կամքի

արտահայտման ձևին և բովանդակությանը, որը սույն գործում առկա փաստական հանգամանքներով հնարավոր չէ պարզել՝ հենց ձայնագրության բացակայության պատճառով:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ Պատվիրատուի կողմից սույն բողոքի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձին չներկայացվեց որևէ վերաբերելի կամ թույլատրելի ապացույց, առ այն, որ մասնակիցների ներկայացրած գները ներկայացվել են միավորի, այն է՝ 1 (մեկ) տարվա հաշվարկով և որ մասնակիցները բանակցել են և բանակցությունների ժամանակ գները ներկայացրել են 1 (մեկ) տարվա հաշվարկով:

Փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով: Սույն դեպքում, որպես որոշակի ապացույց, Պատվիրատուի կողմից չի ներկայացվել գնահատող հանձնաժողովի բանակցությունների նիստի տեսաձայնագրությունները կամ ձայնագրությունները, որն էական նշանակություն ունի սույն գործի քննության համար:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, գործով հաստատված փաստերի գնահատմամբ, ինչպես նաև ուսումնասիրելով գնման ընթացակարգի հրավերն ու ներկայացված բողոքի փաստական և իրավական հիմքերը՝ Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չի պահպանվել Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված դրույթը, որի արդյունքում խախտվել է Օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված պահանջները, որպիսի պայմաններում «Ալուշ-Արաքս» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման մասնակիորեն:

Անդրադառնալով բողոքով ներկայացված՝ «Ճանապարհ» ՍՊԸ-ի, «Նաիրի-Նունե» ՍՊԸ-ի, «Ծովագյուղի ՃՇՇ» ՍՊԸ-ի, «Քյավառ սերվիս» ՍՊԸ-ի, «Ճան Շին» ՍՊԸ-ի հայտերը մերժելու և «Ալուշ-Արաքս» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու կամ հայտերով ներկայացրած և բանակցությունների արդյունքում նվազեցված գնային առաջարկները որպես 2022-2026թթ. նախատեսված՝ 5 տարիների համար առաջարկված աշխատանքների կատարման համար պայմանագրի ընդհանուր գին դիտարկելու մասին պահանջներին՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ սույն որոշմամբ արված վերլուծությունների ու դատողությունների համատեքստում այդ պահանջները դառնում են առարկայազուրկ և մերժման ենթակա: Մասնավորապես՝ 1-ին չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու

մասին և 17.12.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշումների դադարեցմամբ, ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, 1-ին չափաբաժնի մասով, դեռ պետք է հրավիրի գնահատող հանձնաժողովի նոր նիստ՝ Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված դրույթն ապահովելու համար, այն է՝ տեսաձայնագրության կամ ձայնագրության միջոցով արձանագրելու 17.12.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ բանակցությունների ժամանակ մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները (հայտով ներկայացված և բանակցությունների ժամանակ առաջարկած) ներկայացվել են 1 (մեկ) տարվա, թե՞ 5 (հինգ) տարվա հաշվարկով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ալուշ-Արաքս» ՍՊԸ-ի կողմից 24.12.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/119 ծածկագրով բողոքը բավարարել մասնակիորեն:

1. Պարտավորեցնել «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել պայմանագիր կնքելու մասին և 17.12.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշումները՝ 1-ին չափաբաժնի մասով:

2. Մնացած մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**